

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ԱՓՐԻԿԷ ԵՒ ՆՈՐԱ ՎԵՐՋԻՆ ԱՐՇԱՒԱՆՔՆԵՐՆ

Իտալացի հռչակաւոր ճանապարհորդն Ֆէրտինանտ Մարգինի՝ դարձաւ իւր յԱփրիկէ ըրած արշաւանքէն. 'ի մէջ այլ բազմաթիւ ծանօթութեանց և նորութեանց՝ կը պնդէ նաեւ թէ Africa անունը երկու ք ով պէտք է գրուի:

Ընդհանրապէս կը կարծուի թէ Ափրիկէ անունը՝ յառաջ եկած ըլլայ 'ի յունէն α — φρικα անցուրտ, կամ 'ի փիւնիկ լեզուաց՝ Ափրիկայ, որ կը նշանակէ գաղթականութիւն, կամ կարբեդոնի շուրջը բնակող Ափրեան կոչուած ցեղէ մը, ուսկից ելած է Հռոմայեցւոց Africa, զոր առաջին անգամ կը յիշատակէ Եննիոս: Սակայն այս անուանակոչութեանց և ոչ մին կրնայ փաստ լինել Մարգինիի նորութեան:

Աչք մը տանք Ափրիկէի աշխարհագրութեան՝ որուն հնոց համար՝ միայն Միջերկրականի և Եթովպիոյ ինչ ինչ եզերքները ծանօթ էին. սակայն զարմանալի է որ Ափրիկէ իւր Նեղոսի ձորահովտին մէջ՝ մեզի ամենէն աւելի հնագոյն քաղաքականութեան ցոյցը տալէն վերջը, դրական գիտութեան մէջ յետին կարգն ունեցած է, այսինքն յետ Ամերիկայի և Ովկիանիոյ: Ափրիկէի վրայ հնոց ունեցած ծանօթութեանց՝ տեղեկութիւն կու տան մեզ Հերոդոտոս, Ստրաբոն, Պոմպոնիոս Մելա, և Տոլուկոս. արդէն բանասիրաց ծանօթ է իպպարքեայ վաղեմի վրիպակ կարծիքը որով զհարաւային Ափրիկէ կ'երկարէր դէպ յարեւելս, և Հնդկային Ովկիանոսին եզերքէն շրջելով՝ կը միացնէր զայն ընդ Ասիոյ: Սակայն եթէ քանի մը հին պատմաբան աշխարհագիրտաց կարծիքն գիտենք այս մասին՝ սակայն ցաւալի է ըսել որ հին Ժողովրդոց՝ ինչպէս Եգիպտացւոց, փիւնիկեցւոց և նոյն իսկ Թունաց ունեցած տեղեկութիւնք՝ դժբաղդաբար մեզ չեն աւանդուած: Զարդ ոչ ոք գիտէ թէ մասնաւորապէս Եգիպտացւոց ծանօթութիւնք ինչ աստիճանի էին. սակայն այս յայտնի է որ ծանօթ էր իրենց Եթովպիա՝ որոյ հետ անընդհատ պատերազմ կը մղէին: Երբեմն կ'ըսուէր թէ փիւնիկեցւոց պէտք էր ծանօթ եղած ըլլար բովանդակ Ափրիկէ. սակայն

միայն վերջերս գտնուեցան իրենց հետքերը Ափրիկէի խորերը՝ Ափրիկէի Արեւելեան և Լոնտրայի Աշխարհագրական ընկերութիւնը՝ յանձնեցին հռչակաւոր հնախօս Թէոդոր Պէնդի, որ արդէն փիւնիկեան աւերակներ գտեր էր Պահոէյմ կղզեաց մէջ (Պարսկային ծոց), որ Ափրիկէի արեւելեան հարաւային կողմերը տեղագրական և հնախօսական նորագոյն հետախուզութիւն մ'ըսկրսի։ Ի Զիմպապիէ կարևոր պեղումներ կատարած միջոցին՝ տեղական աւերակաց վերաբերեալ քանդակներ և կահկարասիներ ՚ի յայտ եկան, որք ըստ Պէնդի՝ փիւնիկեան ծագումն ունին։ Թէպէտ դեռ ևս չենք կրնար այս մնացորդք ամենայն ստուգութեամբ նուիրել Ուլիերայ երկրին նաւորդաց՝ սակայն յուսալի է որ սղքա և այլ աւերակաց մնացորդք՝ պիտի օգնեն գիտնոց Զիմպապիէի ծագման խնդիրը լուծելու համար։ Ափրիկէի վրայ վերջերս հրատարակուած գրութիւն մը՝ ՚ի մէջ այլոց կը յիշատակէ. — 260 ոտք տրամագծով Դեմէնոս մը լի նշանագրերով. նմանապէս ամենահին խորան մը՝ ծեփուած թռչնոց, փղերու և որսական քանդակներով. կապտագոյն և կանաչ աւսթներէն գատ, որք անշուշտ պարսկական ծագումն ունին. վերջերս ոսկեպատ պղնձեայ թիթեզ, մալ գտնուեցաւ։

Այս և ասոր նման առարկայք որ հարաւային Ափրիկէի մէջ գտնուեցան՝ եթէ փիւնիկեան ծագումն ալ չունին՝ սակայն յայտնի է թէ փիւնիկեցիք հոս բերած են, և այս բանիս յայտնի ապացոյց են այս ժողովրդեան Ափրիկէի այս մասին վրայ ունեցած ծանօթութիւնը, զորս ոչ Հերոդոտեայ և ոչ ալ Պտղոմէոսի քով կը գտնենք։

Ափրիկեան հնախօսութիւնը՝ պէտք է նշանակէ նաև այս խորհրդաւոր երկրին արեւելեան կողմը՝ այսինքն Սոմալիի թերակղզւոյն մէջ վերջերս գտնուած հնութիւններն, Ռոպէքքի իտալացին որ ծանօթ է գիտնոց իւր այս երկրին մէջ կատարած գիտական ճանապարհորդութեամբ՝ Հնդկաց Ուլիանոսին եղբրքը բազմութիւ հնագոյն դամբաններու հանդիպեցաւ հեղեղատաց ձորերու և հովտաց մէջ։ Ռոպէքքիի այս գիւտը եթէ ուսումնասիրեն հնախօսք՝ անշուշտ պիտի լուսաւորուին և ստուգուին փիւնիկեցւոց՝ ինչպէս Արաբացւոց, թերևս նաև Յունաց իսկ, այն կարծեցեալ յարաբերութիւնը տեղաբնակ ժողովրդոց հետ։ Արդէն յիշեալ իտալացիէն շատ առաջ՝ հմուտ ճանապարհորդն գաղղիացի Ռոմուալ՝ Սոմալի երկրին մէջ՝ ամենահին յինուածոց, գերեզմանաց և այլ առարկայից հետքը գտաւ, որոնք շատ նմանութիւն ունին յունական հնագոյն գաղթականութեանց մէջ գտնուածներուն. ասոնցմէ գատ Սոմալի լեզուին բառերուն և

յատուկ անուանց մէջ՝ բաղմամբիւ յունական արմատներ գտաւ։ Նոյն իսկ բնիկ ժողովրդեան տիպը և գծագրութիւնը՝ շատ կը տարբերի սեւամորթէն։ և ինչ ինչ գաւառներու մէջ նաև սեմական ցեղէն, և մեծ նմանութիւն ունի արիականին։ Զօրավարն Տալլերմէ Սոմալի երկրին վրայ հրատարակած իւր մի համալից յիշատակարանին մէջ կ'ըսէ թէ այս ցեղին կերպարանաց և գծագրութեան կանոնաւորութիւնն և նրբութիւն՝ յայտնի ապացոյց է իրենց խառնուրդին ոչ միայն ընդ Արաբացոց, այլ և ընդ Յունաց և Պարսից։

Փունդի բնակիչք՝ որ նկարուած են թեբէի տաճարի մը որմնանկարաց մէջ՝ ընծայաբերք առ թագուհին Հադաշերա՝ խէժ, խունկ և կինամոն 'ի ձեռին, ամենաճիշտ կը նմանին թէ՛ տիպով և թէ տարազով այժմեան Սոմալի բնակչաց։ Սակայն աւելի այնպէս հաւանական կը թուի որ այս նկարս ոչ եթէ Սոմալիներ կը ներկայացընէ՝ այլ արաբական ցեղ մը, որ կը բնակէր փոռն կամ Կոռն երկրին մէջ, ուսկից յառաջ եկան Քանա-նացիք—իբսոսք որ արշաւեցին յեփպոսոս (գրեթէ 2500 տարի Ն. Ք), և փիւնիկ Քանանացիք՝ որ գրեթէ մի և նոյն ժամանակ հաստատուեցան յԱտորիս, Միջերկրականի եզերքը, և կոչուեցան փենիկք կամ փունիկք, և այս կոչումը իրենց յաջորդաց, այսինքն Կարթագինեցոց ալ անցաւ։

Ափրիկեան յետին արշաւանաց պատմութեան մէջ պէտք չէ անյիշատակ թողուլ զէմին, զԵունքէր և զՔազադի, որք քննեցին Նեղոսի խորհրդաւոր ակունք, և Սդէնլիի զարմանալի և նորորինակ ճանապարհորդութիւնը։

Արդէն Պտղոմէոսի հնագոյն աշխարհագրական տախտակաց վրայ՝ կը տեսնենք որ Նեղոս երկք լիճերէ կը ձևանայ. երկու ճիւղ կ'եննէին կրկին լճերէ, և դեռ աւելի 'ի հիւսիսակողմն՝ երրորդ լճին մէջ կը միանային, և աստի անդր այս խորհրդաւոր գետը կը թափէր 'ի Միջերկրականն. 'ի Պտղոմէոսէ ցՄարինոս Տիւրացի, ցետրիզի, ցփրա Մաւրոյ և մինչև Իգնատիոս Տանդի, որ 1583ին գծագրեց վատիկանու համատարածը՝ և Անտոն Սանդուչի որ այն մանեկաւոր գունդը շինեց որ կը պահուի փլորենտիոյ թանգարանին մէջ, նեղոսեան լիճք միշտ նոյն օրինակաւ նշանակեալ են, սկսելով գրեթէ հարաւային 10° լայնութենէ։

Այս լճային դրութեան հարաւային կողմը գտնուած երկու լճերը՝ աշխարհագրական կրկին մեծ սխալներ են իբր ակունք կամ աղբերք Նեղոսի. սակայն բաղդաւոր սխալ մ'եղաւ. վասն զի առաջնորդեց զլիվինկաղբն ուրիշ մեծ գիւտի մը. այսինքն

Քոնկոյի ականց։ Ի Ներոնէ հրամայեալ և կարգադրեալ արշաւանքէն վերջը՝ նշանաւոր բան մը չիկայ մինչև ցՄէհէմմէտ Ալի ներկայ դարուս կէսը. որ 1840ին արշաւանք մը հանեց այս նպատակաւ որ հասաւ մինչև 'ի Կոնստըրոտ, Նեղոսի գլխաւոր ճիւղին վրայ, Հասարակածին լճերէն քիչ հեռի։ Յետ ճանապարհորդութեանց Տէ Պոնոյի (1855-61), Փիաճճիայի (1861-65), Միանիի (1860, 70-71), Անդինորիի (1860) որք Սպիտակ Նեղոսի մեծ մասը քննեցին, Նեղոսի ականց խնդիրը մնաց միշտ անլուծանելի դադտնիք մը. այնպէս որ Լիվինկսդըն նոյն խնդիրը հակառակ կողմէն սկսաւ քննել։ Շրէք ալ նոյն խնդրով զբաղեցաւ հարաւային կողմէն գալով, բայց տարբեր ուղղութիւն բռնեց, և աւելի բաղաւոր գտնելով՝ Հասարակածին տակ Ուքերէվ մեծ լիճը գտաւ (1858)։ Այս լիճը, որ 'ի պատիւ Անդդիոյ Թագուհւոյն վիկտորիա կոչուեցաւ, քննեց նոյն ինքն Շրէք իր երկրորդ ճանապարհորդութեան մէջ (1861-62) ընդ կրէնդի, և հուսկ յետոյ Սդէնլի (1875). սա իւր յետին նշանաւոր ուղևորութեան մէջ գտաւ որ այս լիճը կարծուածէն աւելի կ'երկարէր 'ի հարաւակողմն, և թէ իւր ընդարձակութիւնն էր 80 հազար քառակուսի մղոն, որ է ըսել գրեթէ Պաւերայի բովանդակ տարածութիւնն, Ուքերէվ լճին գիւտով ափրիկեան աշխարհագրութեան այժմեան դիրքին մէջ՝ կրնանք գուրցել որ Շրէք այս դարաւոր խնդրոյն գլխաւոր կէտը լուսաւորեց։ Պաքէր 1864ին Սպիտակ Նեղոսէն վեր ելնելով հասաւ մինչև 'ի լիճն Մուգան, որ յետոյ Ալպէրդ կոչուեցաւ, և կ'ընդունի վիկտորիայի ընդարձակ և տղմալից ճիւղը. վերջերս Սդէնլիի նեղոսեան երրորդ լճին վրայ ըրած քննութիւնք, նմանապէս իմին փաշայի, Եունքէրի և Քազադիի հետազոտութիւնք՝ իբր հետեանք կրնան համարուիլ Շրէքի հիմնական և ամենակարեւոր գիւտին։

Այք մը տանք արդ Քոնկոյի՝ Ափրիկէի երկրորդ գետին վերայ կատարուած յետին քննութեանց, որ բովանդակ աշխարհիս ջրաբաշխական դրութեանց ամենէն հսկայագործն է. և քանի մը խօսք ալ ըսնք հարաւային Ափրիկէի վրայ։ Սակայն Քասայի և Ուպանճիի եզերքը կատարուած վերջին ուղևորութիւններն յիշատակելէն առաջ՝ համառօտիւ մը Քամբրոնի, Լիվինկսդընի և Սդէնլիի գիւտերը թուենք։ Ինչպէս ամէն մարդ գիտէ՝ Լիվինկսդըն գնաց յԱփրիկէ 1840ին իբր բժիշկ և քարոզիչ 27 տարեկան. նախ և առաջ Բարեկուտոյ գլխոյն ներքին կողմերը քննեց. անկէ Լիմփոկոյի վրայէն ուղևորեցաւ. 1849ին Նկամի լիճը գտաւ. հասաւ 'ի վերին Զամպէզ, իջաւ 'ի

Քոնոնցա և 1854ին վերադարձաւ 'ի Լոնտրա . քիչ վերջը հա-
կառակ կողմէն չընցաւ ընդ Ափրիկէ . 'ի Սոնտայէ յԱլտան-
տեանն 'ի Քուիլիմանի Հնդկային ովկիանոսին վրայ : 1858ին
վերստին քննեց զՋամպէզ, որ արեւելեան կողման ամենէն մեծ
գետն է . գտաւ զՇիրէ և սորա մի մեծ ճիւղն , և Նիասսայի մեծ
լիճը . 1865ին վերադարձաւ 'ի Նիասսա և շրջակայքը ամենա-
մեծ ուշադրութեամբ քննեց և ուսումնասիրեց . գտաւ յետոյ
Պակուէօլօ լիճը , ուսկից կը ձևանան Քոնկօ , Մոէրո , Լանտի և
այլն՝ գետակները . Դանկանիքա լիճն այցելեց , զոր արդէն տե-
սեր էր Շրէք 1858ին , բայց առանց ուշադիր ըլլալու . 1869ին
հասաւ յՈւնտի Դանկանիքայի արեւելեան ափանց վրայ , և վեր-
ջապէս 1871ին նոյեմբերի 18ին հանդիպեցաւ Սդէնլիի : Վերջ-
նոյս հետ կարեւոր ուղևորութիւն մը կատարեց Դանկանիքայի
շուրջը և հաստատեց թէ անկարելի է ո՛ր և է յարաբերու-
թիւն մ'ունենայ Նեղոսի հետ . մեռաւ Լիվինկսդէն 1873 մայիսի
առաջին օրը , իւր մարդասիրական և գիտական փառաւոր դաշ-
տին վրայ 'ի Լիդուպո մերձ 'ի լիճն Պանկուէօլօ :

Նոյն տարին տեղակայն Քամէրոն արեւելեան ափունքէն ներս
մտաւ , գնաց յՈւնտի և այցելեց 'ի Դանկանիքա . 96 գետակ-
ներ կը թափին այս լճիս մէջ , և միայն Լուգուկա կոչուածը
կ'ելնէ : Լոմանի գետը գտաւ . դարձաւ յետոյ 'ի մետաղաբերն և
յարգաստւորն Քաթաննա . յառաջ տարաւ ուղևորութիւնն մինչև
յափունս կուինիոյ , որ է երկիր ոսկւոյ , արծաթոյ , երկաթոյ ,
պղնձոյ . Քամէրոն կը հաստատէ թէ 50 միլ . դումարի դրամա-
գլխով մը 3 տարուան մէջ հարաւային Ափրիկէ կրնայ բանուկ վա-
ճառական երկիր մը դառնալ . պէտք է դիտել աստ նաև որ միայն
Քոնկոյի աւազանը՝ Գաղղիայէն վեց անգամ մեծ է :

1874ին սեպտեմբերի մէջ Սդէնլի կը հասնի դարձեալ յա-
րեւելեան ափունս Ափրիկէի . Լուֆիճրի նախապատրաստական շր-
ջանը կատարելէն վերջը՝ Ջանդիպարէն կը սկսի իւր երկրորդ
և մեծ ուղևորութիւնն . զինու զօրութեամբ կը հասնի 'ի լիճն
Վիկտորիա . լճին շրջանն ընելով կ'անցնի 'ի լիճն Ալպէրտ ,
կ'ելնէ 'ի Դանկանիքա , կը հասնի 'ի Լուալապա և յամառու-
թեամբ և քաջասրտութեամբ առաջ կը տանի իւր ճամբան
մինչև 'ի գետաբերանն . Ժամանակիս ուղևորութեանց և ոչ մին՝
ասոր չափ զարմանալի և ժողովրդական է , որ կարծես ներկայ
դարուս մէջ կը նորոգէ հին տիտանեանց գործերն և քաջու-
թիւններն : Այս երեք նշանաւոր ճանապարհորդաց ուղևորու-
թենէն վերջը՝ գովեստիւ պէտք է յիշատակել զգերմանացիին
Վայպման , զբորդուգէն Սէրբա-Քինգո , Պրիդո-Քարելլօ , ի-

վընս, Քլէրքի, Օ. Լէնց, Հոհոյ և այլն: Քոնկոյի ավուները
ժամանեցին վերջերս Ճոնսթըն, Թոմսըն և Շարբ անդղիացիք:

ՄԵԾ ԵՒ ՓՈՔՐ ՄԱՐԴԻԿ

Աւելի ստոյգն ըսելու համար՝ այս յօդուածը պէտք էր կոչել « Բարձր և ցած մարդիկ » Անգղիացւոց յոյժ գործադրական բառերը գործածելով, որպէս զի չըլլայ թէ Ֆիզիզական բարձրութիւն կամ մեծութիւն, որոյ վրայ պիտի խօսինք, բարոյականին հետ չփոթենք:

Հռչակաւոր յոյն քանդակագործն Պոլիկլէտ, որ ժամանակին ամենէն աւելի սրամիտ քննադատներէն մին էր, և ոչ միայն արուեստաւորի աչօք ուսումնասիրեր էր մարդկային կերպարանքը՝ այլ նաև իմաստասիրի մը, վճռեց որ մարդկային մարմնոյ արուեստական գաղափարականը՝ չափաւոր մեծութիւնն է. և թէ նախատիպ պատկերն՝ երկու ծայրերուն մէջ եղածն է, ինչպէս մեծին և փոքրին, նիհարին և գիրին, բարձրին և ցածին, որոնք նախնական կանոնաւոր ձևոյն զանազանութիւններն և վատթարացումն են:

Սակայն թուի թէ հնոց կարծիք այս նկատմամբ կամաց կամաց փոխուեր են. Լիսիպպոս Սիկլիոնացին՝ առաջինն եղաւ որ բացատրեց և ՚ի գիր անցուց իւր բազմութիւ գրուածոց մէջ այս նոր կարծիքը, այսինքն թէ նախատիպը՝ որ է ըսել բուն գեղեցկութեան կամ վայելչութեան նախազաղափարը՝ այն անձանց վրայ կը գտնուի որ սովորական չափէն քիչ մ'աւելի բարձր են. կ'ըսէր թէ « Հինք (այսինքն Պոլիկլէտ) կը ներկայացընեն զմարդ ինչպէս որ է, այսինքն միջահասակ. իսկ ես զայն կը ներկայացընեմ ինչպէս որ պէտք էր ըլլար »:

Հնոց այս կրկին կարծեաց մէջ՝ ՚ի դրական վայելչութեան՝ գաղափարականին և իրականին մէջ եղած յաւիտենական պատեւրազմը կը տեսնենք. յիշուի գաղափարականն Լիսիպպոս իւր գրուածոց մէջ բնութենէն շատ չի հեռանար: Երկերոն հակառակ իւր ժամանակակցաց կարծեաց՝ կ'ըսէ թէ Պոլիկլէտի արձանաց վրայ կը տեսնէ գեղեցկութեան գաղափարականը, մինչդեռ Լի-